ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИ
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPOR
DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.010520632, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Правительский дом 2, 0010, V. Sargsyan 3, Governmental House 2, Yerevan, www.edu.am,
secretariat@edu.am

No 03/14.2/16515-19 «14» 08 20

«Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն»
ՀԿ նախագահ
ՄԱՐԻ ՉԱՔՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Չաքրյան,

Ի պատասխան Ձեր 2019 թ. օգոստոսի 13-ի N ԱԱ-22 գրության՝ հայտնում ենք, որ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1983 թ. «Հայկական ՍՍՀ տարածքում պետական պահպանության տակ վերցված պատմության և կուլտուրայի հուշարձանների և նրանց պահպանական գոտիների ցուցակների հաստատման մասին» N 377 որոշմամբ հաստատված ցուցակում Դալմայի այգիները չեն ներառվել և այդ պատճառով դրա պահպանական գոտին չի կազմվել, զբաղեցրած տարածքի և պահպանական գոտիների մակերեսների չափերի վերաբերյալ տվյալներ չկան:

Հետագայում Դալմայի այգիները՝ որպես տեղական նշանակության հուշարձան, ընդգրկվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության կողմից 1990 թ. հունվարի 24-ին հաստատված ցուցակում, որտեղ դրանց տարածքի վերաբերյալ նշում կատարված չէ:

Դրանից հետո այգիները որպես այգեպուրակային ժառանգության մաս և բնության հուշարձան չեն հաշվառվել և չեն ընդգրկվել ՀՀ կառավարության կողմից 2004 թ. հոկտեմբերի 7-ի N 1616-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում, ինչի պատճառով դրանց առնչվող տեղեկատվություն նախարարությունում առկա չէ:

8/14/2019

X

ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Signed by: KHACHATURYAN NARINE 6602620207

Հարգանքով՝
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ

ՊՄՀՊ գործակալություն
Կատ.՝ Ս. Շաքարյան
Հեռ.՝ 011 565118